ցել է երկու կրակի մէջ. Խանսարցի Միրզա Մէհդի՝* գիւղատիրոջ մահուան պատճառով ինքնիշխան աղաներ գլուխ են բարձրացրել ու աշխատում են գիւղի տէրը դառնալ։ Այս տարայ հունձքն ստանալու համար կառավարական իշխանութիւնն ուղարկել է Մօրթէնաղուլի խանին, սա էլ իր կողմից՝ Մէհրաբ և Ալի խաներին է ուղարկել, միւս կողմից Սալար Ազամի մարդիկը՝ Աբտալ և Ալաղի խաները ամեն կերպ աշխատում են իրենք ստանալ, այնպէս որ խեղճ գիւղացիութեան համար ստեղծուել է անելանելի մի դրութիւն, երկու կողմից էլ մարդիկ են ուղարկուած գիւղ հարկն ստանալու համար, որոնք ամեն տեսակ բռնութիւններ են գործում. խեղճերը չգիտեն որի՞ն բաւարարութիւն տան, մնացել են յուսահատ դրութեան մէջ և իրականութիւնն այն է, որ նրանց ամեն բոպէ վտանգ է սպառնում։

№	ԿԱՐԳԵՐ	Շունչ
1	Աղքատ	200
2	Զուններոր	100
3	Միջակ	223
4	Ուններոր	100
5	Հարուստ	—
	Ընդամենը	623

ՇՈՒՐԻՇԿԱՆ

Միլակերտից դէպի արևմուտք, կէս ֆարսախ հեռու, սարերի փէշին, ապառաժոտ մի բլրի վրայ ընկած է Շուրիշկանը. սա զուտ հայաբնակ, բաւական գեղեցիկ, բանաստեղծական դիրքով փոքրիկ մի գիւղ է, որի առաջը զարդարուած է ուռենիների, բարդիների և կաղամախիների տնկարաններով, իսկ հիւսիսային և հարաւային կողքերին փռուած են ծովանման արտերը։ Խմելու ջուրն աղբիւրի է, որոնք բղխում են գիւղի փէշերից, բայց գիւղի զարդը կազմում է

* Սա այն բռնակալ և արիւնարբու աղան է, որ տարիներ աղբուկի պէս ծծել է գիւղացիների արիւնը։ Ա. Ե.